ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՏԱՆԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՇՆԱԿԱՀԱՐՆԵՐԻ VIII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ

ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՈՒՆԻՍԻ 25 – ՀՈՒԼԻՍԻ 2, 2025 թ.

www.babajanyan-competition.am

Աջակիցներ

Երևանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ
«Կամերտոն» մշակութային հասարակական կազմակերպություն
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Մշակութային կրթության աջակցության հիմնադրամ
Հայաստանի պետական ֆիլհարմոնիա, «Առնո Բաբաջանյան» համերգասրահ
Արամ Խաչատրյանի տուն-թանգարան
«Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ

ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Մասնակցության հայտը անհրաժեշտ է լրացնել առցանց անցնելով հետևյալ հղումով https://forms.gle/z3J3toxcD6h9SUzRA և ուղարկել մինչև 2025թ. հունիսի 5-ը ներառյալ:
2. Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել մինչև 22 տարեկան /ներառյալ/ պատանի և երիտասարդ դաշնակահարներ:
3. Մրցույթ-փառատոնն անցկացվելու է երկու ձևաչափով՝
   առկա՝ հայաստանաբնակ մասնակիցների համար,
   առցանց՝արտերկրի մասնակիցների համար:
   Արտերկրի մասնակիցները ցանկության դեպքում կարող են մասնակցել ***առկա*** ձևաչափով:
4. Ֆորս-մաժորային պայմաններում մրցույթ-փառատոնը կանցկացվի **առցանց** ձևաչափով՝ բոլոր մասնակիցների համար:
5. **Առցանց** ձևաչափով մասնակիցների լսումները կանցկացվեն տեսագրություններով:
6. **Առցանց** ձևաչափով մասնակիցները պետք է YouTube-ում հրապարակված տեսագրության հղումը՝ կցեն հայտին:
7. Մրցույթ-փառատոնն կանցկացվի չորս տարիքային խմբով.
   - Պատանեկան A խումբ - մինչև 11 տարեկան /ներառյալ/,
   - Պատանեկան B խումբ - 12-15 տարեկան /ներառյալ/,
   - Երիտասարդական C խումբ - 16-18 տարեկան /ներառյալ/,
   - Երիտասարդական D խումբ - 19-22 տարեկան /ներառյալ/:

8. Պատանեկան A, B և Երիտասարդական C խմբերում մրցույթ-փառատոնը կանցկացվի մեկ փուլով:
9. Երիտասարդական D խմբում մրցույթ-փառատոնը կանցկացվի երկու փուլով. Երկրորդ փուլ կանցնեն առաջին փուլի մասնակիցների ընդհանուր թվի 50 %:
10. Նախորդ մրցույթ-փառատոնի Մեծ և 1-ին կարգի մրցանակակիրները նույն տարիքային խմբում հանդես գալ չեն կարող:
11. Բոլոր ստեղծագործությունները պետք է կատարվեն անգիր:
12. Մրցույթ-փառատոնի բոլոր դրամական պարգևները հավասարապես կկիսվեն մասնակցի և նրա դասախոսի միջև:
13. Այն մասնակիցները, ովքեր չեն արժանանա դիպլոմի կամ դափնեկրի կոչման, կստանան մրցույթ-փառատոնի մասնակցության վկայական:
14. **Առցանց** ձևաչափով մասնակիցների դիպլոմները կտրվեն էլեկտրոնային տարբերակով:
15. **Առկա** ձևաչափով մասնակիցների ելույթների հերթականությունը կորոշվի վիճակահանությամբ:
    Առցանց ձևաչափով մասնակիցների տեսագրությունների ունկնդրումը կանցակցվի ըստ հայտերի ընդունման հերթականության:
    Երիտասարդական D խմբի ելույթների հերթականությունը երկու փուլերում կպահպանվի:
16. Մրցույթ-փառատոնը կանցկացվի Երևան քաղաքի լավագույն համերգային դահլիճներում:
17. Երիտասարդական C և D խմբերի մասնակիցներին կտրվի ակուստիկ փորձի հնարավորություն:
18. Մասնակիցների ճանապարհածախսը և կեցությունը վճարում են իրենք՝ մասնակիցները:
19. Մրցույթ-փառատոնի հեռարձակման, տեսագրության և ձայնագրության հեղինակային իրավունքը պատկանում է միայն մրցույթ-փառատոնի կազմկոմիտեին:
20. Մրցույթ-փառատոնին մասնակցելու համար սահմանված է մասնակցության վճար, որը անհրաժեշտ է կատարել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի, հետևյալ հաշվեհամարներին.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները վճարում են ՀՀ դրամով՝ հետևյալ հաշվեհամարին.

220303350627000 /ACBA bank/

Ստացող՝ «ԿԱՄԵՐՏՈՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԿ

Նպատակը՝ «Դաշնակահարների մրցույթ», մասնակցի անուն, ազգանուն:

Արտասահմանյան քաղաքացիների համար վճարման ռեկվիզիտներ՝

euro- ով վճարման համար՝

Թղթակից բանկ. Commerzbank, AG

Հասցե. 60261 Frankfurt am Main, Germany SWIFT: COBADEFF

Թղթակից հաշիվ. 400888012200 Ստացողի հաշիվը. 220303350338002

Ստացող՝«Կամերտոն» մշակութային հասարակական կազմակերպություն:

Նպատակը՝ «Դաշնակահարների մրցույթ», մասնակցի անուն, ազգանուն:

ռուբլի- ով վճարման համար՝

Банк корреспондент:

АО Райффайзенбанк Москва, Россия БИК: 044525700

К/С : 30101810200000000700 SWIFT: RZBMRUMM

Банк получателя:

АКБА БАНК ОАО SWIFT code: AGCAAM22
корреспондентский счет в АО Райффайзенбанк: 30111810300000000041
Номер счета получателя: 220303350106958
Ստացող՝ «Կամերտոն» մշակութային հասարակական կազմակերպություն:
Նպատակը՝ «Դաշնակահարների մրցույթ», մասնակցի անուն, ազգանուն:

Մասնակցության վճարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար.

Պատանեկան A խումբ - 10000 ՀՀ դրամ
Պատանեկան B խումբ - 12000 ՀՀ դրամ
Երիտասարդական C խումբ - 15000 ՀՀ դրամ
Երիտասարդական D խումբ - 18000 ՀՀ դրամ

Մասնակցության վճարը արտասահմանյան քաղաքացիների համար.

Պատանեկան A խումբ - 100 եվրո
Պատանեկան B խումբ - 120 եվրո
Երիտասարդական C խումբ - 150 եվրո
Երիտասարդական D խումբ - 180 եվրո

Խնդրում ենք վճարելիս հաշվի առնել բանկային միջնորդավճարը:
Մասնակցությունից հրաժարվելու դեպքում գումարը վերադարձի ենթակա չէ:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Պատանեկան A խումբ

Առաջին մրցանակ - 100 ԱՄՆ դոլար, դափնեկրի դիպլոմ և Ոսկե մեդալ
Երկրորդ մրցանակ - դափնեկրի դիպլոմ և Արծաթե մեդալ
Երրորդ մրցանակ - դափնեկրի դիպլոմ և Բրոնզե մեդալ
Չորրորդ մրցանակ - դափնեկրի դիպլոմ
Հինգերորդ մրցանակ - դափնեկրի դիպլոմ
Դիպլոմ

Պատանեկան B խումբ

Առաջին մրցանակ - 200 ԱՄՆ դոլար, դափնեկրի դիպլոմ և Ոսկե մեդալ
Երկրորդ մրցանակ- դափնեկրի դիպլոմ և Արծաթե մեդալ
Երրորդ մրցանակ - դափնեկրի դիպլոմ և Բրոնզե մեդալ
Չորրորդ մրցանակ - դափնեկրի դիպլոմ
Հինգերորդ մրցանակ - դափնեկրի դիպլոմ

Դիպլոմ

Սահմանված է միայն մեկ Մեծ մրցանակ - 1000 ԱՄՆ դոլարի* չափով Երիտասարդական C և D խմբերի համար:

Երիտասարդական C խումբ

Առաջին մրցանակ - 400 ԱՄՆ դոլար, դափնեկրի դիպլոմ և Ոսկե մեդալ

Երկրորդ մրցանակ - 300 ԱՄՆ դոլար և դափնեկրի դիպլոմ և Արծաթե մեդալ
Երրորդ մրցանակ - 200 ԱՄՆ դոլար և դափնեկրի դիպլոմ և Բրոնզե մեդալ
Չորրորդ մրցանակ - դափնեկրի դիպլոմ
Դիպլոմ

Երիտասարդական D խումբ

Առաջին մրցանակ - 700 ԱՄՆ դոլար, դափնեկրի դիպլոմ և Ոսկե մեդալ
Երկրորդ մրցանակ - 500 ԱՄՆ դոլար և դափնեկրի դիպլոմ և Արծաթե մեդալ
Երրորդ մրցանակ - 300 ԱՄՆ դոլար և դափնեկրի դիպլոմ և Բրոնզե մեդալ
Դիպլոմ

***Դրամական մրցանակները կտրամադրվեն համարժեք ՀՀ դրամով:**

Սահմանված են հատուկ մրցանակներ և պարգևներ.

- Մեդալներ
  Ոսկե
  Արծաթե
  Բրոնզե
- Բոլոր տարիքային խմբերում Առնո Բաբաջանյանի ստեղծագործության լավագույն կատարման համար:

ԵԼՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Մրցութային ելույթի ընդհանուր ամենաբարձր գնահատականը 100 միավորն է:

Մեծ մրցանակ – 100 միավոր

Պատանեկան A և B խմբեր	Երիտասարդական C խումբ
1-ին մրցանակի դափնեկիր – 90 - 99 միավոր	1-ին մրցանակի դափնեկիր – 90 - 99 միավոր
2-րդ մրցանակի դափնեկիր – 80 - 89 միավոր	2-րդ մրցանակի դափնեկիր – 80 - 89 միավոր
3-րդ մրցանակի դափնեկիր – 70 - 79 միավոր	3-րդ մրցանակի դափնեկիր – 70 - 79 միավոր
4-րդ մրցանակի դափնեկիր – 60 - 69 միավոր	4-րդ մրցանակի դափնեկիր – 60 - 69 միավոր
5-րդ մրցանակի դափնեկիր – 50 - 59 միավոր	Դիպլոմանտ – 50 - 59 միավոր
Դիպլոմանտ - 40-49 միավոր	
Երիտասարդական D խումբ	
1-ին մրցանակի դափնեկիր – 95 - 99 միավոր	
2-րդ մրցանակի դափնեկիր – 90 - 94 միավոր	
3-րդ մրցանակի դափնեկիր – 85 - 89 միավոր	
Դիպլոմանտ – 75 - 84 միավոր	

Ավելի ցածր միավոր ստացած մասնակիցներին կտրվի մասնակցության վկայական:

Դիպլոմները և շնորհակալագրերը կուղարկվեն էլեկտրոնային տարբերակով:

Դափնեկիրների և Մեծ մրցանակակիրների ելույթները կտեղադրվեն մրցույթի պաշտոնական կայքէջում:

ԺՅՈՒՐԻ

Ժյուրիի կազմում են բարձրակարգ մասնագետներ, կոնսերվատորիաների պրոֆեսորներ, հանրահայտ կատարողներ:

Ժյուրիի որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Ժյուրին իրավունք ունի.

չշնորհել կամ կիսել մրցանակները,
ընդհատել ելույթը՝ ստեղծագործությունների կատարման համար սահմանված ժամանակը գերազանցելու պարագայում:

ՀԱՅՏԻ ՁԵՎ՝ https://forms.gle/z3J3toxcD6h9SUzRA

ՏԵՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ /առցանց ձևաչափի համար/

1. Յուրաքանչյուր խմբում անհրաժեշտ տեսագրությունների քանակն է.
   - Պատանեկան A խումբ - մեկ տեսագրություն,
   - Պատանեկան B խումբ - մեկ տեսագրություն,
   - Երիտասարդական C խումբ – մեկ տեսագրություն,
   - Երիտասարդական D խումբ - երկու տեսագրություն (յուրաքանչյուր փուլի համար՝ մեկական):

2. Ստեղծագործությունների կատարման միջև տեսագրությունը չպետք է ընդհատվի և մոնտաժվի՝ առկա և առցանց մասնակիցների ելույթների իրավահավասար պայմաններ ապահովելու նպատակով:
3. Մասնակցի դեմքը և ձեռքերը պետք է պարզորոշ տեսանելի լինեն:
4. Կատարումից առաջ մասնակիցը, դեմքով դեպի տեսախցիկը պետք է հայտարարի իր անունը, ազգանունը, տարիքային խումբը և հետևյալ տեքստը. «Առնո Բաբաջանյանի անվան դաշնակահարների VIII միջազգային մրցույթ-փառատոնի համար»:
5. Տեսագրությունը, որը չի համապատասխանի վերը նշված պահանջներին, չի ընդունվի:

ԾՐԱԳԻՐ

Պատանեկան A խումբ

/մինչև 11 տարեկան ներառյալ/

Մասնակիցը ներկայացնում է ազատ ծրագիր՝ 8-12 րոպե տևողությամբ, որում ներառված կլինի Առնո Բաբաջանյանի կամ այլ հայ կոմպոզիտորի ստեղծագործություն:

Պատանեկան B խումբ

/12-ից մինչև 15 տարեկան ներառյալ/

Մասնակիցը ներկայացնում է ծրագիր՝ 15-20 րոպե տևողությամբ՝ ներառյալ.

1. սոնատի կամ սոնատինի առաջին մաս /Հայդն, Մոցարտ, Բեթհովեն, Կլեմենտի/,
2. Առնո Բաբաջանյանի կամ այլ հայ կոմպոզիտորի ստեղծագործություն,
3. մեկ կամ երկու տարաբնույթ ստեղծագործություն՝ մասնակցի ընտրությամբ:

Երիտասարդական C խումբ

/16-ից մինչև 18 տարեկան ներառյալ/

Մասնակիցը ներկայացնում է ծրագիր՝ 20-30 րոպե տևողությամբ՝ ներառյալ.

1. Բարրոկո ոճի ստեղծագործություն,
2. դասական սոնատի առաջին մաս /Հայդն, Մոցարտ, Բեթհովեն/,
3. Առնո Բաբաջանյանի որևէ ստեղծագործություն:
4. XIX դարի արևմտաեվրոպական կոմպոզիտորի մեկ ստեղծագործություն /Շուբերտ, Շոպեն, Շուման, Մենդելսոն, Բրամս, Գունո, Լիստ, Չայկովսկի/:

Երիտասարդական D խումբ

/19-ից մինչև 22 տարեկան ներառյալ/

1-ին փուլ

Մասնակիցը ներկայացնում է ծրագիր՝ 15-25 րոպե տևողությամբ՝ ներառյալ.

1. մեկ վիրտուոզ էտյուդ /Շոպեն, Լիստ, Ռախմանինով, Սկրյաբին, Դեբյուսի, Լիգետի/,
2. դասական սոնատի առաջին մաս /Հայդն, Մոցարտ, Բեթհովեն/,
3. հայ կոմպոզիտորի կամ մասնակցի ազգության կոմպոզիտորի ստեղծագործություն /տվյալ ստեղծագործության նոտաները տրամադրվում են ժյուրիին/:

2-րդ փուլ

Մասնակիցը ներկայացնում է ծրագիր՝ 20-30 րոպե տևողությամբ՝ ներառյալ.

1. Առնո Բաբաջանյանի հետևյալ ստեղծագործությունների ցանկից որևէ կետ՝ ըստ մասնակցի ընտրության.
   - «Պրելյուդ» և «Վաղարշապատի պար»
   - «Էքսպրոմտ» և «Վաղարշապատի պար»
   - Երկու պիես «Վեց պատկեր»-ից՝ ներառյալ «Տոկատը» կամ «Սասունցիների պարը»
   - «Կապրիչիո»
   - «Պոեմ»
2. XIX դարի արևմտաեվրոպական կոմպոզիտորի մեկ ստեղծագործություն /Շուբերտ, Շոպեն, Շուման, Մենդելսոն, Բրամս, Գունո, Լիստ, Չայկովսկի/,
3. XX-XXI դդ. կոմպոզիտորի ստեղծագործություն /տվյալ ստեղծագործության նոտաները տրամադրվում են ժյուրիին/:

Հայաստանի Հանրապետություն, 0014
ք. Երևան, Ազատության պող. 18
Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ
Մրցույթի կազմկոմիտե
Հեռախոս՝ (0037410) 28 53 20 Բջջ. հեռախոս՝ (0037491) 78 13 70
Կայքէջ՝ www.babajanyan-competition.am
Էլ. հասցե՝ solist@kamerton.am